

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթուղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Աշխարհագրական մտածողության հիմնական հատկանիշներից չէ.

- 1) տարածականությունը
- 2) ռիթմիկությունը
- 3) համալիրությունը
- 4) կոնկրետությունը

2


Հյուսիսային կիսագնդում կեսօրին լեռների ո՞ր լանջերն են ավելի շուտ ազատվում ձյունից.

- 1) հարավային
- 2) հարավարևելյան
- 3) հյուսիսային
- 4) հյուսիսարևելյան

3

Նկար 1.- ում տրված քարտեզը կազմելու համար ի՞նչ պրոյեկցիա է կիրառվել:

- 1) կոնային
- 2) հասարակածային
- 3) գլանային
- 4) ազիմուտային



նկար 1.

4

Բնութագրումով որոշել վարկածը.

Ելակետ ընդունելով այդ վարկածը՝ գիտնականները եզրակացրել են, որ Երկրի վրա կուտակված հսկայածավալ ջուրն արտահոսել է ընդերքից, Երկրի տաքացումը սկսվել է կենտրոնից: Ո՞րն է այդ վարկածը:

- 1) միգամածային
- 2) պատահարային (աղետային)
- 3) երկնաքարային
- 4) խորքային գրավիտացիոն

5

Արեգակը հյուսիսային արևադարձի վրա լինում է.

- 1) գարնանային գիշերահավասարի օրը
- 2) ամառային արևակայության օրը
- 3) աշնանային գիշերահավասարի օրը
- 4) ձմեռային արևակայության օրը

6

Երկրի մակերևույթից դեպի խորքը ջերմությունն աստիճանաբար.

- 1) նվազում է
- 2) բարձրանում է
- 3) մնում է անփոփոխ
- 4) բարձրանում է, այնուհետև՝ իջնում

7

Ո՞ր պլատֆորմն է առաջացել Լավրասիայի տրոհումից:

- 1) Հարավամերիկյան
- 2) Հնդկական
- 3) Հյուսիսամերիկյան
- 4) Արաբական

8


Երկրային մյուս ոլորտների հետ համեմատած՝ մթնոլորտը

- 1) ամենաթեթևն է
- 2) ամենածանրն է
- 3) ամենակարծրն է
- 4) ամենախիտն է

9

Նկար 2-ում պատկերված է.

- 1) ամառային մուսսոն
- 2) ցերեկային բրիզ
- 3) գիշերային բրիզ
- 4) ձմեռային մուսսոն



10

Ո՞ր պնդումն է ճիշտ.

Արևադարձային լայնություններում մայրցամաքների արևմտյան ափերի երկայնքով անցնող սառը ծովային հոսանքները.

- 1) խոչընդոտում են տեղումների առաջացմանը
- 2) նպաստում են տեղումների առաջացմանը
- 3) նպաստում են օդի ջերմաստիճանի բարձրացմանը
- 4) չեն ազդում մերձափնյա տարածքի կլիմայի վրա

11

Գետի ակունքի բացարձակ բարձրությունը 2200 մ է, իսկ գետաբերանինը՝ 1000 մ: Գետի անկումը կլինի.

- 1) 1000 մ
- 2) 2200 մ
- 3) 1200 մ
- 4) 2000 մ

12

Ո՞ր բնական զոնայում են տարածվում բառբարն ու շշածառը:

- 1) սավաննաների
- 2) փշատերև անտառների
- 3) լանատերև անտառների
- 4) հասարակածային մշտադալար անտառների

13

Ո՞ր բնական զոնայում են ապրում փիղն ու ընձուղտը:

- 1) սավաննաների
- 2) տափաստանների
- 3) անապատների
- 4) լայնատերև անտառների

14

Ո՞ր կլիմայական գոտին է բաժանվում երեք մարզի՝ միջերկրածովային, ցամաքային, մուսսոնային:

- 1) մերձանտարկտիկական
- 2) մերձհասարակածային
- 3) մերձարևադարձային
- 4) մերձարկտիկական

15

Որո՞նք են միջին հասակի կամ հին լեռնաշղթաներ.

- 1) Անդերը և Ալպերը
- 2) Դրակոնյանը և Կապին
- 3) Մեծ Կովկասը և Հինդուկուշը
- 4) Պիրենեյները և Կարպատները

16

5000 մ-ից բարձր լեռնագագաթներ են.

- 1) Կլուչևսկայա Սոպկան և Էլբրուսը
- 2) Մոնբլանը և Կամերունը
- 3) Օրիսաբան և Դեմավենդը
- 4) Ֆուձիյաման և Վեգուվը

17

Վինսոն լեռնագագաթը հվ. լ. 78°-ի վրա է: Որքա՞ն է Վինսոնի ստորոտից հարավային բևեռ իրական հեռավորությունը:

- 1) 780 կմ
- 2) 1332 կմ
- 3) 8658 կմ
- 4) 1200 կմ

18

Ընտրել Հարավային Ամերիկայի բնական զոնաների տեղական անվանումների և բնական զոնայի կամ այն ընդգրկող տարածքի համապատասխանությունների ճիշտ շարքը.

ա. պարամոս	1. խոնավ հասարակածային անտառները
բ. պամպա	2. բարձրալեռնային մարգագետինները Անդերում
գ. սելվաս	3. սավաննաները Բրազիլական սարահարթում
դ. կամպոս	4. մերձարևադարձային տափաստանները Լա-Պլատայի դաշտավայրի հարավում

- 1) ա-2, բ-1, գ-4, դ-3
- 2) ա-2, բ-4, գ-1, դ-3
- 3) ա-3, բ-4, գ-1, դ-2
- 4) ա-3, բ-1, գ-4, դ-2

19

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Մագելանի նեղուցով Հրո երկիր կղզին բաժանվում է մայրցամաքից:
- 2) Պանամայի պարանոցը հարավային կիսագնդում է:
- 3) Պանամայի նավարկելի ջրանցքով միանում են Խաղաղ և Ատլանտյան օվկիանոսները:
- 4) Դրեյկի նեղուցով Հրո երկիր կղզին բաժանվում է Անտարկտիդայից:

20

Ատլանտյան օվկիանոս թափվող գետ է.

- 1) Մակենզին
- 2) Միսիսիպին
- 3) Կոլորադոն
- 4) Կոլումբիան

21

Ո՞ր շարքում սխալ կա.

- 1) Դրակոնյան, Կապի, Ատլասի—լեռներ
- 2) Նամիբ, Կալահարի, Սահարա—անապատներ
- 3) Տանգանիկա, Նյասա, Շարի—լճեր
- 4) Զամբեզի, Նեղոս, Օրանժ—գետեր

22

Աֆրիկայի մերձարևադարձային մշտականաչ անտառների ու թփուտների բնական զոնայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Տարածված կենդանատեսակներն են էմու ջայլամը, դինգո շունը և բադակտուցը:
- 2) Մթնոլորտային տեղումներն առավելապես թափվում են ձմռանը:
- 3) Հողային ծածկում գերակշռում են շագանակագույն և մոխրագորշ հողերը:
- 4) Տարածված բուսատեսակներն են բաոբաբը, ֆիկուսը, կաուչուկատու հևեան:

23

Ո՞ր թերակղզիներն են մխրճվում Մեքսիկական ծոց.

- 1) Ֆլորիդա և Կալիֆոռնիա
- 2) Յուկատան և Լաբրադոր
- 3) Ֆլորիդա և Յուկատան
- 4) Յուկատան և Կալիֆոռնիա

24

«Լեռնային համակարգ — լեռնագագաթ» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Անտարկտիկական Անդեր—Ակոնկագուա
- 2) Մեծ Կովկաս—Մեծ Արարատ
- 3) Ապալաչներ—Կոսցյուշկո
- 4) Էլբուրս—Դեմավենդ

25

Ո՞ր շարքի բոլոր ծովածոցերն են համարվում նույն օվկիանոսի մաս.

- 1) Բենգալյան, Օմանի, Սիամի
- 2) Օմանի, Բիսկայան, Բոտնիկական
- 3) Սիամի, Պարսից, Ադենի
- 4) Ադենի, Պարսից, Բենգալական

26

ԽՍՀՄ-ի կազմում չի եղել.

- 1) Էստոնիան
- 2) Մոլդովան
- 3) Ռումինիան
- 4) Լիտվան

27

Ո՞ր շարքի բոլոր երկրներն անմիջական ելք չունեն դեպի ծով.

- 1) Բուլվիա, Նեպալ, Շվեյցարիա, Նիգեր
- 2) Հունաստան, Վրաստան, Պարագվայ, Նիգեր
- 3) Դանիա, Չեխիա, Աֆղանստան, Բուլղարիա
- 4) Ադրբեջան, Լեհաստան, Ֆինլանդիա, Լիտվա

28

Պետական կառավարման ձևը, երբ պետական իշխանության մարմիններին ընտրում է ժողովուրդը, կոչվում է.

- 1) կայսրություն
- 2) հերցոգություն
- 3) թագավորություն
- 4) հանրապետություն

29

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Լեոնահանքային արդյունաբերության և էքստենսիվ գյուղատնտեսության տարածման շրջաններում բնակչության խտությունը փոքր է:
- 2) Քաղաքակրթության հնագույն օջախներն ավելի խիտ են բնակեցված:
- 3) Որոշ տարածքներում բնակչության մեծ խտությունը կարող է պայմանավորված լինել բնակչության բարձր բնական աճով և ներգաղթով:
- 4) Լեոնային շրջաններն աչքի են ընկնում բնակչության խտության բարձր ցուցանիշով:

30

Բնակչության կտրուկ աճը համեմատաբար կարճ ժամանակահատվածում անվանում են.

- 1) ժողովրդագրական պայթյուն
- 2) ժողովրդագրական քաղաքականություն
- 3) ժողովրդագրական ճգնաժամ
- 4) ժողովրդագրական հեղափոխություն

31

Երկրի բնակչության թիվը կազմում է 365600 է, ծնելիության գործակիցը՝ 5‰: Ծնվածների բացարձակ թիվը կկազմի.

- 1) 1828 մարդ
- 2) 1628 մարդ
- 3) 1980 մարդ
- 4) 2028 մարդ

32

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Երկրաջերմային էլեկտրակայանները կառուցում են հրաբխային շրջաններում:
- 2) Համաշխարհային տնտեսությունը ունի զարգացման երեք փուլ՝ գյուղատնտեսական, արդյունաբերական և հետարդյունաբերական:
- 3) Ճապոնիայում, Շվեյցարիայում և Իտալիայում շատ բարձր է արդյունահանող արդյունաբերության բաժինը:
- 4) Մեր օրերում մեծանում է էներգիայի ոչ ավանդական աղբյուրների օգտագործումը:

33

Մերենաշինության տեղաբաշխման սկզբունք չէ:

- 1) տեղաբաշխումը վառելիքային բազաների մոտ
- 2) տեղաբաշխումը սպառման վայրերի մոտ
- 3) տեղաբաշխումը խիտ բնակեցված վայրերում
- 4) տեղաբաշխումը գիտական կենտրոնների մոտ


34

Ընտրել «մշակութային հուշարձան — պետություն» համապատասխանությունների ճիշտ շարքը.

- | | |
|-----------------|-----------------|
| 1. Մթոունհենջ | ա. Պերու |
| 2. Թաջ Մահալ | բ. Հունաստան |
| 3. Ակրոպոլիս | գ. Մեծ Բրիտանիա |
| 4. Մաչու Պիկչու | դ. Հնդկաստան |

- 1) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
- 2) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
- 3) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
- 4) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա

քարտեզ 1



35

Քարտեզ 1-ում ո՞ր ծովն է նշված Ա տառով.

- 1) Հարավչինական
- 2) Դեղին
- 3) Արևելաչինական
- 4) Սուլավեսի

36

Քարտեզ 1-ում n° ր պետությունն է նշված Ձ տառով.

- 1) Ղազախստան
- 2) Ուզբեկստան
- 3) Թուրքմենստան
- 4) Տաջիկստան

37

Ավստրալիայի վերաբերյալ n° ր պնդումն է ճիշտ.

- 1) Ստորերկրյա արտեզյան ջրերի պաշարներով աշխարհի առավել հարուստ երկրներից է:
- 2) Աշխարհի ամենախիտ բնակեցված պետություններից է:
- 3) Արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:
- 4) Բնակչության թվով ամենախոշոր քաղաքը Կանբերան է:

38

Ամերիկայի Միացյալ Նահանգներին են պատկանում.

- 1) Կանարյան կղզիները
- 2) Ֆոլկլենդյան կղզիները
- 3) Սեյշելյան կղզիները
- 4) Հավայան կղզիները

39

Լատինական Ամերիկայի վերաբերյալ n° ր պնդումն է սխալ.

- 1) Խոշորագույն նավահանգիստներից են Բուենոս Այրեսն ու Ռիո դե Շանեյրոն:
- 2) Նավթի արդյունահանման ծավալով առաջատար երկիր է Չիլին:
- 3) Պարանա գետի վրա է կառուցված Իտայպու խոշորագույն ջրէկը:
- 4) Շաքարեղեգի մշակության ծավալով Բրազիլիան աշխարհում առաջինն է:

40

Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ n° ր պնդումն է ճիշտ.

- 1) Ոսկու արդյունաբերությունը հիմնականում կենտրոնացած է Կոլա թերակղզում:
- 2) Բնական գազի պաշարներով աշխարհում գրավում է առաջին տեղը:
- 3) Էլեկտրաէներգիայի մեծ մասն արտադրվում է ատոմային էլեկտրակայաններում:
- 4) Նավթի հիմնական պաշարները տեղաբաշխված են Կուգրասի, Կանսկ-Աչինսկի ավազաններում:

41


Արաքս գետի անկումը 2615 մ է: Թեքությունը կլինի.

- 1) 7,6 մ/կմ
- 2) 3,87 մ/կմ
- 3) 2,44 մ/կմ
- 4) 1,9 մ/կմ

42

Ո՞ր լեռնագագաթն է ՀՀ-ում.

- 1) Դիզափայտ
- 2) Գոմշասար
- 3) Մեծ Քիրս
- 4) Աժդահակ



քարտեզ 2

43

Քարտեզ 2-ում Կոտայքի սարավանդը ո՞ր տառով է նշված.

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ

44

Քարտեզ 2-ում Եղեգնաձոր քաղաքը ո՞ր տառով է նշված.

- 1) Ը
- 2) Ե
- 3) Զ
- 4) Է

45

ՀՀ բնակչության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ռուսները հիմնականում բնակվում են Վայոց ձորի մարզում:
- 2) Թվաքանակով երկրորդ ազգը ասորիներն են:
- 3) Եզդիները հիմնականում բնակվում են Սյունիքի մարզում:
- 4) Ազգային կազմով աշխարհի առավել միատարր պետություններից է:

46

ՀՀ-ում ուրբանիզացվածության ամենաբարձր մակարդակ ունեցող մարզն է.

- 1) Շիրակը
- 2) Սյունիքը
- 3) Արարատը
- 4) Արմավիրը

47

ՀՀ արդյունաբերության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Այլումինի արտադրությունը բացառապես օգտագործում է տեղական հումք՝ Թեժ լեռան և Շվանիձորի (Մեղրու լեռնաշղթա):
- 2) Մեքենաշինության զարգացումը պայմանավորված է սև մետաղների առկայությամբ:
- 3) Մետաղաձուլության մասնագիտացված ուղղություններից է մոլիբդենի արտադրությունը:
- 4) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Հրազդան և Գյումրի քաղաքները:

48

Ո՞ր մարզում չկա երկաթուղային կայարան.

- 1) Լոռի
- 2) Գեղարքունիք
- 3) Վայոց ձոր
- 4) Շիրակ

49

Արագածոտնի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հողային ծածկույթում գերակշռում են կիսաանապատային հողերը:
- 2) Ընդերքը հարուստ է հրաբխային ապարատեսակներով:
- 3) Տարածքի բարձրաչափական նիշերի մեծ տարբերության պատճառով կլիման բազմազան է:
- 4) Հիմնական ջրային զարկերակը Քասաղ գետն է՝ Գեղարոտ և Ամբերդ գլխավոր վտակներով:

50

Կոտայքի մարզում բուսաբուծության ո՞ր ենթաճյուղը զարգացած չէ.

- 1) բանջարեղենի մշակությունը
- 2) ծխախոտի մշակությունը
- 3) հացահատիկի մշակությունը
- 4) պտղաբուծությունը

51

Բուսական ռեսուրսների պահպանմանն ու վերականգնմանն ուղղված միջոցառում չէ:

- 1) արգելոցների ստեղծումը
- 2) գենոֆոնդի պահպանումը
- 3) անտառների ստեղծումը
- 4) աղակալված հողերի լվացումը

52

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Ցամաքի և օվկիանոսի շփման գոտում ձևավորվել է համաշխարհային օվկիանոսային տնտեսությունը:
- 2) Համաշխարհային օվկիանոսի աղտոտիչների մեջ գլխավորը նավթը և նավթամթերքն են:
- 3) Համաշխարհային օվկիանոսի հիմնախնդիրն ունի զուտ տնտեսական բնույթ:
- 4) Առավել աղտոտված են Համաշխարհային օվկիանոսի ներքին ծովերը:

53

Ո՞ր տարածաշրջանն է աշխարհում առաջինը աղքատության մակարդակով:

- 1) Կենտրոնական Աֆրիկան
- 2) Հյուսիսային Ամերիկան
- 3) Կենտրոնական Ասիան
- 4) Արևմտյան Եվրոպան

54

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Էկոլոգիական լարվածությունը պատճառ է դառնում էկոլոգիական ագրեսիայի, որն արտահայտվում է թունավոր տեխնոլոգիաներն ու թափոններն այլ երկրներ տեղափոխելով:
- 2) Տեղային էկոլոգիական աղետները շրջակա միջավայրի համամոլորակային փոփոխությունների պատճառ դառնալ չեն կարող:
- 3) Էկոլոգիական աղետալի շրջաններն աշխարհում աստիճանաբար ավելանում են:
- 4) Աշխարհի խոշոր արդյունաբերական շրջաններին բնորոշ են սմոգը, թթվային անձրևները և աղմկային աղտոտումը:

55

ՀՀ արդյունաբերության տրված ճյուղերից օդային ավազանն առավելապես աղտոտում է.

- 1) սննդի արդյունաբերությունը
- 2) ջերմաէներգետիկան
- 3) թեթև արդյունաբերությունը
- 4) մեքենաշինությունը

56

Գրել Ճապոնական կղզեխմբին պատկանող կղզիների համարները.

- | | |
|--------------------|-------------|
| 1) Ճամայկա | 5) Սիկոկու |
| 2) Նյու Ֆաունդլենդ | 6) Սումատրա |
| 3) Հոկայդո | 7) Հոնսյու |
| 4) Կրետե | 8) Կյուսյու |

57

Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են ոչխարաբուծությամբ.

- | | |
|-----------------|--------------|
| 1) Իրան | 5) Արգենտինա |
| 2) Գերմանիա | 6) Ուկրաինա |
| 3) Կանադա | 7) Ճապոնիա |
| 4) Նոր Զելանդիա | 8) Լեհաստան |

58

Գրել այն մայրաքաղաքների համարները, որոնք իրենց երկրի ամենախոշոր քաղաքը չեն.

- | | |
|-----------|------------|
| 1) Բեյջին | 5) Անկարա |
| 2) Մինսկ | 6) Բոգոտա |
| 3) Թեհրան | 7) Կահիրե |
| 4) Կիև | 8) Բեյրութ |

59

Գրել այն երկրների համարները, որոնք դաշնային պետություններ են.

- | | |
|-------------|-------------|
| 1) Ֆրանսիա | 5) Եգիպտոս |
| 2) Իտալիա | 6) Թուրքիա |
| 3) Գերմանիա | 7) Բրազիլիա |
| 4) Ուկրաինա | 8) Լեհաստան |

60

Գրել այն երկրների համարները, որոնց բնակչության տարիքային կառուցվածքում համեմատաբար մեծ է ծերերի բաժինը.

- | | |
|---------------|-------------|
| 1) Հնդկաստան | 5) Շվեդիա |
| 2) Ուզբեկստան | 6) Իրան |
| 3) Գերմանիա | 7) Պակիստան |
| 4) Աֆղանստան | 8) Եգիպտոս |

61

Գրել նեֆելինային սիենիտի հանքավայրերի համարները.

- | | |
|--------------|-------------|
| 1) Ագարակի | 5) Հրազդանի |
| 2) Շվանիձորի | 6) Շամլուղի |
| 3) Թեժ լեռան | 7) Սվարանցի |
| 4) Կապուտանի | 8) Սոթքի |

62 ՀՀ տրված գետերի համարները դասավորել դրանց ջրաէներգետիկական հզորության նվազման կարգով.

- 1) Հրազդան 2) Արփա 3) Որոտան

63 Տրված պետությունները դասավորել բնակչության թվաքանակի նվազման կարգով.

- 1) ԱՄՆ
2) Ռուսաստան
3) Ինդոնեզիա
4) Ճապոնիա

(64-65). Գետի ջրի արագությունը $0,4$ մ/վ է, իսկ կենդանի կտրվածքի մակերեսը՝ 5 մ²:

64 Որոշել գետի ծախսը:

65 Որոշել գետի հոսքը 5 ժամում:

66

Հայկական հրաբխային բարձրավանդակի մակերեսը կազմում է 100 000 կմ²:
Որքա՞ն մակերես կզբաղեցնի այն 1 : 2 000 000 քարտեզում:

67

Երկրի բնակչության թիվը 90 000 է, բնական աճի գործակիցը՝ 15‰: Տարվա ընթացքում ներգաղթել են 1800 մարդ, իսկ արտագաղթել՝ 700 մարդ: Որոշել երկրի բնակչության թիվը 1 տարի հետո:

68

Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հս.լ. 35°30' և արմ. ե. 80°:
Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը դեկտեմբերի 22-ի կեսօրին:

69

Գերմանիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Արտահանման մեջ գերակշռում են բնական գազն ու նավթամթերքները:
- 2) Տնտեսությունը գտնվում է զարգացման հետինդուստրիալ փուլում:
- 3) ՀՆԱ-ի կառուցվածքում ամենափոքր բաժինը զբաղեցնում է սպասարկման ոլորտը:
- 4) Արդյունաբերության առաջատար ճյուղերից են մեքենաշինությունն ու քիմիական արդյունաբերությունը:
- 5) Գյուղատնտեսությունն աչքի է ընկնում մեքենայացման ու քիմիացման բարձր մակարդակով:
- 6) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:

70

ՀՀ Գեղարքունիքի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Մարզի գյուղերում է ապրում բնակչության մեկ երրորդը:
- 2) Առկա են քրոմիտի և ոսկու պաշարներ:
- 3) Կլիման բարեխառն լեռնային է:
- 4) Տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է:
- 5) Հողածածկույթում գերակշռում են լեռնաանտառային գորշ հողերը:
- 6) Անասնապահության առաջատար ճյուղն է խոզաբուծությունը: